ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի մասնագետ Նոնա Միերյանի՝ 2024թ. հուլիսի 13-ից օգոստոսի 3-ը ներառյալ ք. Պրահա (Չեխիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Նոնա Միերյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Պրահա, Չեխիայի Հանրապետություն, հուլիսի 13-ից օգոստոսի 3-ը

3. Հրավիրող կողմը՝

Ամերիկյան հետազոտությունների հիմնադրամ (The Fund for American Studies (TFAS)) և Կարլի Համալսարանի միջազգայնագիտության ինստիտուտ

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն միջազգային հարաբերություններ, քաղաքական տնտեսություն, կոնֆլիկտների կառավարում թեմաներով դասընթացի:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացին մասնակցում էին աշխարհի տարբեր ծայրերից ընտրված երիտասարդ առաջնորդներ, ովքեր իրենց վաղ կարիերան են ձևավորում միջազգային հարաբերությունների և միջազգային տնտեսական հարաբերությունների հետ առնչություն ունեցող ոլորտներում՝ քննարկելու և կիսվելու վերոնշյալ ոլորտում իրենց փորձով, ընթացիկ մարտահրավերներով, ինչպես նաև նորորաարություններով:

Ամերիկյան հետազոտությունների հիմնադրամի (The Fund for American Studies (TFAS)) և Կարլի Համալսարանի միջազգայնագիտության ինստիտուտի կողմից կազմակերպված

ամենամյա այս ամառային ծրագիրը նվիրված էր 3 հիմնական թեմաների ուսումնասիրությանը՝

1. Քաղաքական տնտեսություն (Political Economy),
2. Փիլիսոփայություն, քաղաքականություն և տնտեսագիտություն (Philosophy, Politics, Economics, PPE),
3. Կոնֆլիկտների կառավարում (Conflict Management)։

Դասընթացի շրջանակներում բացի հիմնական քննարկումներից, տեղի են ունեցել նաև երկու սիմուլյացիոն խաղեր (simulation games), հրավիրյալ դասախոսություններ և միջմշակութային ներկայացում։

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի առաջին շաբաթը նվիրված էր քաղաքական տնտեսության, փիլիսոփայության, քաղաքականության և տնտեսագիտության թեմաների ուսումնասիրմանը, և միմյանց հետ փորձի փոխանակմանը։ Ակտիվ քննարկումներ են ծավալվել տնտեսագիտության և իր ինստիտուտների, շուկայական գործընթացի, հանրային ընտրության տեսությունների և քաղաքականության տնտեսագիտության թեմաներով։ Քննարկումների և դասընթացների ժամանակ բարձրացվել են նաև հարցեր փիլիսոփայության և քաղաքականության կապի, պետության հիմնական նպատակների, կառավարության դերի, սահմանադրությունների նպատակի և կարևորության, դրա փիլիսոփայական հիմքերի, ժամանակակից լիբերալիզմի գլխավոր հիմնադիրների, հավասարության և սեփականության կոնցեպտների տարբերությունների և վերջապես տնտեսական աճ ապահովող ինտիտուտների մասին։

Երկրորդ շաբաթվա ընթացքում անցկացվել է առաջին մոդուլի քննությունը, իսկ քննարկման թեմաները եղել են պոստմոդեռնիզմը, նեոմարքսիզմը, վոկեյիզմի փիլիսոփայական, քաղաքական և տնտեսական հետևանքները, կիրառական փիլիսոփայությունը որպես քաղաքականությունը հասկանալու գործիք և լիբերալ հասարակության սկզբունքներն ու դրանց հետ կապված հիմնախնդիրները։ Կոնֆլիկտի կառավարման մոդուլի շրջանակներում ներկայացվել և քննարկման են դրվել միջազգային հարաբերություններում ուժ հասկացությունը, պատերազմը որպես սակարկության խնդիր ներկայացնելու մոդելը, ժողովրդավարության և հակամարտությունների կապը, լիբերալ խաղաղության կոնցեպտը, արդի աշխարհում առևտրի և փոխկապակցվածության դերը հակամարտությունների մեջ, կապիտալիստական խաղաղության կոնցեպտը, երկրի և անձերի

ներքին շահերը կոնֆլիկտներ հրահրելիս և դրանցից բխող երևույթները, անկանոն և կանոնավոր կոնֆլիկտների, քաղաքական պատերազմների և տերրորի տարբերությունները և առաջացման պատճառները, ինչպես նաև դաշինքների, հավաքական անվտանգության և միջազգային օրենքների դերը վերոնշյալ բախումները կանխելիս:

Տվյալ շաբաթվա մեջ անցկացվել է նաև առաջին սիմուլացիոն խաղը "Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու բանակցություններ" խորագրով: Տվյալ վարժությունը տեղի է ունեցել Չեխիայի Հանրապետության Սենատում: Մասնակիցներից ակնկալվում էր, առկա դերերից որևէ մեկը ստանձնելով (ԵՄ անդամ երկրների պատվիրակություն, Թուրքիայի պատվիրակություն, ԵՄ հանձնաժողովի ներկայացուցիչ, գլխավոր քարտուղար), ներկայացնել իր կողմի շահերը և բանակցել այլ կողմերի հետ վերջնական արդյունքի հասնելու համար: Վարժության նպատակներ ավելի պրակտիկ մակարդակի վրա պատկերացում կազմել ինչպես են տեղի ունենում Եվրամիությանն անդամակցության դիմում ներկայացրած երկրների հետ բանակցությունները և կազմել ավելի խորքային պատկերացում բանակցությունների ընթացքում մարտահրավերների առաջացման մասին՝ շահերի բախման հետևանքով:

Դասընթացի վերջին՝ երրորդ շաբաթվա քննարկումները ուղղված էին ներգաղթի և պետությունների կողմից ներգաղթը սահմանափակող քաղաքականությունների մշակման, դրանց փիլիսոփայության և տնտեսագիտության մասին քննարկումներին, ինչպես է նաև այնպիսի հարցերի քննարկամը ինչպիսիք են պետության դերը քաղաքականությունների մշակման մեջ, հնարավոր է արդյոք կարգավորել ներգաղթը ազատական հասարակությունում՝ պահպանելով հավասարակշռությունը ազատության և մշակույթի պահպանման միջև: Տվյալ շաբաթվա ընթացքում անցկացվել են նաև մնացած երկու մոդուլների քննությունները: Վերոնշյալ շաբաթվա մեջ անցկացվել է նաև երկրորդ սիմուլիացիոն խաղը՝ ՆԱՏՈ-յի ռազմավարական հեռատեսության վերլուծության վարչության վերաբերյալ: Վարժանքի ընթացքում մասնակցիներին տրվել էր առաջադրանք կատարել հեռատեսության վերլուծություն մոտ ապագայում տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ ՆԱՏՈ-յի հետագա գործունեության վրա:

Շաբաթը եզրափակվեց միջմշակութային ներկայացումների երեկոյի կազմակերպմամբ: Բոլոր մասնակիցներից ակնկալվում էր փոքրիկ ներկայացումներ իրենց երկրի և մշակույթի մասին՝ միջմշակութային փոխանակում ունենալու նպատակով:

Միջոցառման 3 շաբաթների ընթացքում տեղի են ունեցել նաև մի քանի հրավիրյալ դասախոսություններ: Դասախոսությունները ներկայացվել են ԱՄՆ հանրային դիվանագիտության հանձնաժողովի նախկին նախագահ և ներկային փոխնախագահ, ինչպես նաև TFAS հոգաբարձուների անդամ Վիլլիամ Հիբիլի և ՆԱՏՕ-ի հանրային դիվանագիտության բաժնի գլոբալ գործընկերների հանրային դիվանագիտության պատասխանատու Բարբորա Մարոնկովայի կողմից:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ստեղծվել է միջազգային ցանց Հյուսիսային Ամերիկայից, Եվրոպայից, Մերձավոր Արևելքից և Հյուսիսային Աֆրիկայից ժամանած տարբեր երիտասարդ առաջնորդների և մասնակիցների հետ, ինչպես նաև դասընթացի վերջում տրվել է մասնակցության հավաստագիր և 9 ակադեմիական կրեդիտ:

Միաժամանակ, դասընթացի շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

07 օգոստոսի 2024թ.